ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Եղեգնաձոր

«21» մայիսի 2014թ

N 41

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ , ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, << Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ/ ենթակետի պահանջով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության << Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու մասին>> 1998 թ. հոկտեմբերի 12-ի № 624 որոշումը և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից իրականացված պլանային ստուգումների հիման վրա կազմված № 9 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջարկել Չիվա համայնքի ղեկավար Ն.Սարգսյանին ՝ հատուկ քննարկման առարկա դարձնել Չիվայի գյուղապետարանի կողմից սահմանված կարգի խախտումով կատարված , շինարարության /քանդման/ թույլատվությունների տրամադրման, ավարտական ակտերի ձևակերպման , ինքնակամ շինարարության կանխարգելման և վարչաիրավական խախտումների վերաբերյալ համայնքում իրականացվող աշխատանքներին և իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց տալ պարտադիր կատարման ցուցում , քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով:

Է. ՂԱՋԱՐՅԱՆ